



Տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում Հաճախորդի ապահովագրված ավտոմեքենային պատճառվել է վնաս: Հաճախորդի տեղեկացմամբ՝ պատահարի մասին պատշաճ կարգով Ընկերությունը տեղեկացվել է: Ընկերությունը, սակայն, հրաժարվել է տրամադրել ապահովագրական հատուցում, նշելով, որ պատահարի մասին Ընկերությանը տեղեկացրել է ոչ թե Հաճախորդը, այլ ուրիշ անձ, ով զանգահարելով Ընկերություն՝ ներկայացել է որպես Հաճախորդ: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Ընկերությունը պնդում է, որ զանգահարողը տրամադրել է կեղծ կամ ոչ հավաստի տեղեկություններ, իսկ Հաճախորդը ապահովագրական պատահարի մասին տեղյակ չի պահել Ընկերությանը, ուստի Ընկերությունը իրավունք ունի հատուցում չտրամադրել: Հաճախորդը համաձայն չէ Ընկերության դիրքորոշման հետ, քանի որ պատահարի վերաբերյալ որևէ կեղծ կամ ոչ հավաստի տեղեկատվություն չի տրամադրվել, իսկ պատահարի մասին զանգահարել և տեղեկացրել է այլ անձ, քանի որ տվյալ պահին Հաճախորդը գտնվել է շոկային վիճակում: Ընկերության հետ համաձայնության չգալով՝ Հաճախորդը դիմել է Հաշտարարին:

Պահանջի քննության շրջանակներում Հաշտարարի կողմից ուսումնասիրվել են ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները, այնպես էլ կողմերի միջև կնքված պայմանագիրը: Արդյունքում պարզվել է, որ ապահովադիրը պարտավոր է պատահար տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել ապահովագրողին, իսկ բոլոր դեպքերում պատահար տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնել ապահովագրողին, ընդ որում նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, ***եթե չսպացուցվի, որ նա ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին:***

Այսպիսով, պատահարի տեղի ունենալուց հետո Ընկերությունն իմացել է պատահարի մասին, և անկախ այն հանգամանքից, որ Հաճախորդն անձամբ չի տեղեկացրել պատահարի մասին Ընկերությանը, Ընկերությունն իրավունք չունի այդ հիմքով մերժել ապահովագրական հատուցման տրամադրումը: Իսկ պատահարի մասին Ընկերությունը տեղեկացել է դրա տեղի ունենալուց հետո մի քանի րոպեների ընթացքում, այսինքն՝ ողջամիտ ժամկետում:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը՝ Հաշտարարը գտնում է, որ Ընկերության որոշումը՝ ապահովագրական հատուցում վճարելը մերժելու մասին, հիմնավոր չէ, և տեղի ունեցած պատահարի արդյունքում Հաճախորդի ավտոմեքենային պատճառված վնասը ենթակա է հատուցման, ուստի կայացրել է Հաճախորդի պահանջի բավարարման որոշում: